

Հոլանդահայ համագործակցող կազմակերպություններ.

Հոլանդահայ Կազմակերպությունների Ֆեդերացիա (FAON) - [www.faon.nl](http://www.faon.nl)

Հայ Դատի հանձնախումբ (Hay Tad Nederland) - [www.haytad.nl](http://www.haytad.nl)

Էլ. փոստ՝ [info@faon.nl](mailto:info@faon.nl) կամ [info@haytad.nl](mailto:info@haytad.nl)

## ՄԱՍԼՈ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

- Խնդրագիր Հոլանդական խորհրդարանին Լեոնային Ղարաբաղի մասին
- Նիդերլանդներ՝ Վերանայել Ադրբեջանի հետ հարաբերությունները
- Հոլանդահայության մտահոգությունը Ադրբեջանի պատերազմական սպառնալիքների շուրջ
- Հանրահավաք Հաագայում նվիրված Սումգայիթի ջարդերի 23-ամյակին

**Հաագա, 1 մարտի 2011 թ** - Հաագայում կայացած Լեոնային Ղարաբաղին սատարելու հոլանդահայության հանրահավաքից հետո, որը տեղի ունեցավ 2011 թ. փետրվարի 28-ին, Հոլանդահայ կազմակերպությունների պատվիրակությունը ս.թ. մարտի 1-ին Հոլանդիայի Խորհրդարանի Արտաքին Գործերի մշտական հանձնաժողովի նախագահ տիկին Ն. Ալբայրաքին ներկայացրեց մի խնդրագիր Լեոնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ: Հաագայում Նիդերլանդների խորհրդարանի շենքում կայացած հանդիպմանը ներկա էին նաև մշտական հանձնաժողովի այլ անդամներ՝ գրեթե բոլոր խորհրդարանական խմբակցություններից: Հոլանդահայ պատվիրակության կազմում էին՝ տիկին Ինգա Դրոստը, տիկին Սարինե Աբրահամյանը և պարոն Մաթո Հախվերդյանը:

Համագործակցող Հոլանդահայ կազմակերպությունները կազմակերպել էին հանրահավաք-ցույց Հաագայում 2011 թ. փետրվարի 28-ին՝ սատարելու Լեոնային Ղարաբաղին և ոգեկոչելու 23 տարի առաջ տեղի ունեցած Սումգայիթի հայության ջարդերի գոհերի հիշատակը:

Հանրահավաքը սկսվեց Խաղաղության Պալատի մոտ երկու բուպե լռությամբ՝ հարգանքի տուրք մատուցելու այն հայերին, ովքեր կազմակերպված ջարդերի գոհ դարձան ադրբեջանական քաղաքներում՝ Սումգայիթում (1988), Բաքվում (1990) և այլ վայրում: Այնուհետև ցուցարարները քայլեցին դեպի Ադրբեջանի դեսպանատուն կրելով Հայաստանի և Լեոնային Ղարաբաղի դրոշները և ցուցապաստառներ, որտեղ գրված էին՝ «Վերջ ադրբեջանական ագրեսիային», «Ձեռքերդ հեռու Լեոնային Ղարաբաղից», «Չմոռանանք Սումգայիթի հայերի ջարդը», «Վերջ Ադրբեջանի կողմից մարդկության դեմ ոճրագործությանը», «Խաղաղություն և ազատություն Լեոնային Ղարաբաղին», «Կոսովոյի ինքնորոշման իրավունքի ճանաչում... ինչո՞ւ ոչ Լեոնային Ղարաբաղի համար», «Լեոնային Ղարաբաղ, ուրիշ ոչինչ երբեք, քան ազատություն», «Ազատություն բոլորի համար, նույնպես Լեոնային Ղարաբաղի»: Ցուցարարները հայտնեցին իրենց խոր մտահոգությունը և ներգրավվածությունը Լեոնային Ղարաբաղի իրավիճակի շուրջ: Դեսպանատան առաջ ցուցարարները վանկարկեցին կարգախոսեր՝ դատապարտելով ադրբեջանական ագրեսիան, հիշելով Սումգայիթի ջարդերի գոհերին և սատարելով Լեոնային Ղարաբաղի ժողովրդին, ապա կարդացվեց Նիդերլանդների խորհրդարանին ներկայացվող խնդրագիրը:

Հանրահավաքի ընթացքում ելույթ ունեցողները իրենց խոր մտահոգությունը հայտնեցին աղբրեջանական ռեժիմի աճող սպառնալիքների մասին՝ վերսկսելու զինված հակամարտությունը Լեռնային Ղարաբաղում և պատերազմ սկսելու Հայաստանի դեմ: Ցուցարարները կոչ արեցին աջակցել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը հարգելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման իրավունքը և կոչ ուղղեցին հոլանդական քաղաքական գործիչներին և միջազգային հանրությանը աջակցություն ցուցաբերել այդ ջանքերի համար:

Նիդերլանդների խորհրդարանին խնդրագիրը ներկայացնելու ժամանակ, հոլանդահայ պատվիրակության անունից տիկին Ինգա Դրոստը բացատրեց խորհրդարանի պատգամավորներին Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի լուծման կարևորությունը Հարավային Կովկասի աշխարհաքաղաքական զգայուն տարածաշրջանի համար և խնդրեց սատարել Լեռնային Ղարաբաղի ժողովրդին: Հոլանդական խորհրդարանի Արտաքին գործերի մշտական հանձնաժողովի նախագահ տիկին Ն. Ալբայրաքը հավաստիացրեց հայոց պատվիրակությանը, որ հանձնաժողովը լրջորեն կքննարկի խնդրագրի մեջ բարձրացված բոլոր կետերը:

Նիդերլանդների խորհրդարանին ներկայացված խնդրագրի մեջ նշված է, որ Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշումը, որն արտահայտված է 1991 թ. անկախության հանրաքվեով, նույնքան կարևոր է, ինչքան այլ երկրների ինքնորոշումը, ինչպիսի օրինակ Կոսովոյինը, որի անկախությունը ճանաչել է Հոլանդիան:

Խնդրագիրը հիշեցնում է նաև, որ պետք է սովորել Հյուսիսային Աֆրիկայի վերջին քաղաքական զարգացումներից՝ ավելի հիմնական մոտեցում ցուցաբերելով ոչ ժողովրդավարական ռեժիմների հետ հարաբերություններում, ինչպես որ Ադրբեջանն է, և չառաջնորդվել միայն (աշխարհա)քաղաքական, առևտրատնտեսական և նավթային շահերի սկզբունքներով: Հայտնի է, որ Հոլանդիան լավ հարաբերության մեջ է Ադրբեջանի հետ, չնայած որ Ադրբեջանում տիրում է ավտորիտար ռեժիմ, որտեղ խախտվում են մարդու իրավունքները, բացակայում է մամուլի ազատությունը, որտեղ կոռուպցիան ավելի մեծ ծավալների է հասնում, քան դա եղել է Եգիպտոսում և Թունիսում, և որ այդ ռեժիմը, այնքան է ինքնահարստացել, որ նույնիսկ Հոլանդիայում բնակվող ադրբեջանցիները 2010 թ. բողոքի ցույցի են կազմակերպել իրենց սեփական դեսպանատան առջև, արտահայտելու իրենց գարշանքը ադրբեջանական իշխանության ինքնահարստացման նկատմամբ, երբ երկրում տիրում է լայնածավալ աղքատություն, չնայած հսկայական նավթային եկամուտներին:

Խնդրագիրը կոչ է անում Նիդերլանդների խորհրդարանին՝ դատապարտել ադրբեջանական ռեժիմի բռնությունները, ուշադրություն դարձնել Լեռնային Ղարաբաղի իրավիճակին, վերանայել Ադրբեջանի հետ հարաբերությունները, ակտիվորեն սատարել Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ կարգավորմանը՝ հարգելով Լեռնային Ղարաբաղի ժողովրդի ինքնորոշման սկզբունքները:

Խնդրագիրը կողարկվի նաև Հոլանդիայի արտաքին գործերի նախարար պարոն Ռոզենթային, Մենատի նախագահ պարոն Վան Դեր Լինդենին, հոլանդական ԵՄԽՎ պատվիրակության նախագահ տիկին Բեմելմանս-Վիդեկին և ԵԱՀԿ հոլանդական պատվիրակության նախագահ պարոն Չորյուզին: